ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 10.06.2019թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/47

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «ԼԵՎ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ

Լ. Հայրյանի (լիազորագիր, տրված՝ 01.04.2019թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 10.05.2019թ. թիվ 26/26-1/7665-2019 գրությամբ «ԼԵՎ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը՝ պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 02.05.2019թ. թիվ 01/61-7977 գրության հիման վրա, 10.05.2019թ. թիվ 26/26-1/7665-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «ԼԵՎ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «ԼԵՎ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«ԼԵՎ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/47 ընթացակարգի շրջանակներում 20.05.2019թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ ըստ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվության՝ Ընկերությունը վերահսկվող եկամուտների գծով ունի 258 000 ՀՀ դրամ ժամկետանց պարտավորություն, որի պատճառով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժել է Ընկերության հայտը:

Վերջինս հայտնել է, որ եթե ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից վերահսկվում է դրոշմանիշային վճարները, ինչպես նաև ԱԱՀ-ն, շահութահարկը, եկամտահարկը, ուրեմն հարկային տեսչությունը պարտավոր էր Ընկերության միասնական հաշվում եղած գումարից հաշվանցել վերը նշված պարտքի գումարը:

Միաժամանակ հայտնել է, որ Ընկերությունն ունի դրոշմանիշային վճարի գծով պարտավորություն, որի մասին Ընկերությունը տեղեկացված չի եղել, որ դա կամավոր պարտադիր է և եթե ժամանակին զգուշացվեր ապա Ընկերությունը կվճարեր: Ընկերությանը զգուշացրել էին, որ 2019թ. պարտադիր է և Ընկերությունը փոխանցել է առաջին եռամսյակի գումարները:

3. Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

Երևանի քաղաքապետարանը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 02.05.2019թ. թիվ01/61-7977 գրությամբ հայտնել է, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/29 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.04.2019 թվականի որոշմամբ 7-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է «ԼԵՎ» ՍՊԸ-ն:

Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթով, գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը

ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ 17.04.2019 թվականին հարցում է ներկայացրել ՊԵԿ:

ՊԵԿ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացված տեղեկատվության համաձայն՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ 258 000 ՀՀ դրամի չափով:

Միաժամանակ Պատվիրատուն առաջարկել է Ընկերության նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/47 ընթացակարգի շրջանակներում 20.05.2019թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/47 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/47 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Պատվիրատուի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար հայտարարվել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/29» ծածկագրով բաց մրցույթ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով 15.04.2019թ. հայտ է ներկայացրել «ԼԵՎ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.04.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ՝ «ԼԵՎ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 7-րդ չափաբաժնի մասով:

3. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 22.04.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«ԼԵՎ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից***

վերահսկվող եկամուտների գծով ունի 258 000 ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորություն:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.04.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «ԼԵՎ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

1.ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 24.05.2019թ. թիվ 1573 գրության համաձայն՝ ըստ ՀՀ ՊԵԿ տեղեկատվական բազայում առկա տվյալների «ԼԵՎ» ՍՊԸ-ի դրոշմանիշային վճարի պարտավորությունը 01.11.2018թ. դրությամբ կազմում է 228 000 ՀՀ դրամ, որն առաջացել է 2017 թվականի հունվարից դեկտեմբեր և 2018 թվականի հունվարից սեպտեմբեր ամիսների համար ներկայացված եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական հաշվարկից:

2. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 22.05.2019թ. թիվ 1543 գրության համաձայն՝ Ընկերության կողմից 03.05.2019թ. և 13.05.2019թ. 900005001186 հաշվեհամարին կատարվել են համապատասխանաբար 270 000 ՀՀ դրամ և 1000 ՀՀ դրամ վճարումներ: 21.05.2019թ. դրությամբ դրոշմանիշային վճարի գծով առկա է 11 000 ՀՀ դրամ գերավճար:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 10.05.2019թ. թիվ 26/26-1/7665-2019 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 02.05.2019թ. թիվ 01/61-7977 գրությունը՝ կից փաստաթղթերով, ՍՑ-ՆԳ-2019/47 ընթացակարգի շրջանակներում Ընկերության կողմից ներկայացված դիրքորոշումը և ՊԵԿ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը

ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

«ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ դրոշմանիշային վճարը զինծառայողների կյանքին և առողջությանը պատճառված վնասների հատուցումն ապահովելու նպատակով սույն օրենքով սահմանված կարգով և չափով ՀՀ պետական բյուջե վճարվող պարտադիր վճար է, որի վճարման պարտականությունը կատարվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում սույն օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված չափով դրոշմանիշ գնելու միջոցով:

«Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտները՝ ՀՀ պետական և համայնքների բյուջեներ վճարվող հարկերի, տուրքերի և օրենքով սահմանված վճարների, դրանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով հաշվարկվող տույժերի և տուգանքների ամբողջությունն է,

որոնց հաշվառումը, հաշվառման և (կամ) վճարման նկատմամբ հսկողությունը, մուտքերի ապահովման վերահսկողությունն օրենսդրությամբ վերապահված է հարկային մարմնին:

«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի ժե) պարբերության համաձայն՝ հարկային եկամուտներն են՝ դրոշմանիշային վճարները:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում

էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Պատվիրատուի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար հայտարարված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/29» ծածկագրով բաց մրցույթին մասնակցելու նպատակով 15.04.2019թ. հայտ ներկայացրած «ԼԵՎ» ՍՊԸ-ն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.04.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 7-րդ չափաբաժնի մասով:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 22.04.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«ԼԵՎ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 258 000 ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորություն:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.04.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «ԼԵՎ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

Այսպիսով՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացության համաձայն՝ «ԼԵՎ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորություն, որը գերազանցում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված շեմը:

Մինչդեռ արձանագրում եմ, որ Ընկերությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 24.05.2019թ. թիվ 1573 գրությունը, որի համաձայն՝ ըստ ՀՀ ՊԵԿ տեղեկատվական բազայում առկա տվյալների «ԼԵՎ» ՍՊԸ-ի դրոշմանիշային վճարի պարտավորությունը 01.11.2018թ. դրությամբ կազմում է 228 000 ՀՀ դրամ, որն առաջացել է 2017 թվականի հունվարից դեկտեմբեր և 2018 թվականի հունվարից սեպտեմբեր ամիսների համար ներկայացված եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական հաշվարկից:

Միևնույն ժամանակ արձանագրում եմ, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 10.05.2019թ. թիվ 3-4/17950-2019 գրությամբ հայտնել է, որ ՊԵԿ «Հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի» «Հարկային պարտավորություններ» բաժնում ***<u>2018թ. նոյեմբեր ամսից</u>*** տեղադրված է հետևյալ հաղորդագրությունը՝

«Սույն քաղվածքում դրոշմանիշային վճարների գծով պարտավորությունների կամ սահմանված չափից ավել վճարված գումարների վերաբերյալ տեղեկությունները արտացոլված չեն: Նշված տեղեկությունները ստանալու համար անհրաժեշտ է դիմել սպասարկման բաժին»:

Այսպիսով հաշվի առնելով այն փաստական հանգամանքը, որ Ընկերության մոտ առկա 228 000 ՀՀ դրամ դրոշմանիշային վճարի մասով պարտավորությունը ըստ ՊԵԿ-ի 24.05.2019թ. թիվ 1573 գրության առաջացել է 2017 թվականի հունվարից դեկտեմբեր և 2018 թվականի հունվարից սեպտեմբեր ամիսների համար ներկայացված եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական հաշվարկից, միաժամանակ հաշվի առնելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 10.05.2019թ. թիվ 3-4/17950-2019 գրությունը, որի համաձայն «Հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի» «Հարկային

պարտավորություններ» բաժնում 2018թ. նոյեմբեր ամսից է տեղադրված վերը նշված հաղորդագրությունը, ուստի արձանագրում եմ, որ Ընկերությունը տվյալ ժամանակահատվածում պարտավորությունները կատարելիս առաջնորդվել է բացառապես հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքում արտացոլված տեղեկատվությամբ՝ իրազեկված չլինելով 228 000 ՀՀ դրամ դրոշմանիշային վճարի մասով առկա պարտավորության վերաբերյալ:

Ինչ վերաբերվում է 30 000 ՀՀ դրամ դրոշմանիշային վճարի մասով առկա պարտավորությանը, որն առաջացել է 2018թ. նոյեմբեր ամսից հետո, արձանագրում եմ, որ այն չի գերազանցում Օրենքով նախատեսված շեմը:

Այսպիսով, Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Նման պայմաններում, հաշվի առնելով Ընկերության վարքագիծը, գտնում եմ, որ «ԼԵՎ» ՍՊԸ-ն «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/29» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում թույլ չի տվել ստանձնած պարտավորության խախտում, հետևաբար Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 10.05.2019թ. թիվ 26/26-1/7665-2019 գրությամբ «ԼԵՎ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**